ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2021 թ. N _____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված

Կազմված է «10» նոյեմբեր 2021թ.
և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
Օրինակ-----

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Երևան քաղաքի ավագանու
« » ----------2021թ.
N---Ա որոշմամբ

Երևանի քաղաքապետ

_____Հ.Մարության

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
«22» փետրվարի 2019թ.
Գրանցման թիվ՝ 278.215.1060023
ՀՎՀՀ՝ 00482795
վկայական՝

22.02.2019թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալության կողմից
« » _____ 2021թ

_____

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2021

1. «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Կանոնադրության 2.3.5 ենթակետից հետո լրացնել նոր 2.3.6 - 2.3.9 ենթակետեր հետևյալ խմբագրությամբ.

«2.3.6. Իրականացնել անկած կենդանիների դիակների հավաքում և անկած վայրի ախտահանություն,

2.3.7. Իրականացնել անկած և քնեցված կենդանիների դիակիզում,

2.3.8. Կազմակերպել կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի վարման աշխատանքները,

2.3.9. Իրականացնել կենդանիների ախտաբանական լաբորատոր հետազոտություն»,

2) Կանոնադրության 2.4.4 ենթակետից հետո լրացնել նոր 2.4.5 և 2.4.6 ենթակետեր հետևյալ խմբագրությամբ.

«2.4.5. Իրականացնել Երևան քաղաքի հարակից համայնքների թափառող կենդանիների ստերջացման աշխատանքներ,

2.4.6. Իրականացնել անասնաբուժական թափոնների վնասազերծում (դիակիզում)»:

2. Սույն փոփոխությունը հանդիսանում է 22.02.2019թ. պետական ռեգիստրում գրանցված «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի ավագանու 14.09.2021թ. հ. 442-Ն որոշման 1-ին գլխի 8-րդ կետը՝ անհրաժեշտ է իրականացնել Երևան քաղաքի և նրա հարակից տարածքներում անկած կենդանիների դիակների հավաքում, անկած վայրի ախտահանություն, ինչպես նաև անկած կենդանիների դիակների այրում: Վերջին տարիներին Երևան քաղաքում թափառող կենդանիների մոտ գրանցվել են մարդու և կենդանիների համար խիստ վտանգավոր հիվանդության դեպքեր, ինչպիսիք են լեյշմանիոզը, որը կենդանուց մարդուն է փոխանցվում մլակների միջոցով: Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է կիրառել հակահամաճարակային կանխարգելման միջոցառումներ, հատկապես անկած թափառող կենդանիների դիակների հավաքման, վայրի ախտահանման, տեղափոխման և դիակների այրման ուղղությամբ: Այս միջոցառումը հնարավոր է իրականացնել մասնագիտացված կառույցի, տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի միջոցով, որն ունի անհրաժեշտ մասնագիտական հմտությունները և կարողությունները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԹԱՓԱՌՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎՆԱՍԱԶԵՐԾՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում ծախսերում էական փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ